նակն Աւետիս կաթուղիկոսն է տարեր ի հետն. եւ զմի օրինակն Համբեցիքս մեզ էին յղրկել, ասելով թէ Տեսէք, տեսէք զմեր կաթողիկոսիս զխայտառակութիւնն. զայսպիսի հերձուածողն զուք ի՞նչպէս կաթուղիկոս կու ընդունիք: Եւ զայս եկեալ թուղթս մեք ամենեքեան ականատես եղեալ ընթերցաք: Այս ի՞նչ բան է քո առած բանն. զի կամիս երկրորդ Եզր լինել, եզերիչ եւ խանգարիչ Հայոց ազգիս... զինչ կ'ուզես այս ողորմելի եւ տառապեալ ազգէս Հայոց. է՞ր չես թողուր զիւրեանս յիւրեանց աղքատութեանն. զի թէպէտ որ ազգս Հայոց մարմնով ծառայ են եւ աղքատ, այլ քրիստոնէական ուղղափառ հաւատովս ազատ են. հոգւով փարթամ, եւ հարուստ օրինօք եւ պատուիրանօք...: Զի մեք ամենեքեան հաստատուն կամք ի վերայ ուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ. եւ նզովեմք եւ անիծանեմք զՀաւանօղն Քաղկեդոնի սուտ Ժողովոյն եւ զմիաբանօղն ընդ Ֆռանկացն, թէ՛ կաթուղիկոս է, թէ՛ վարդապետ, թէ՛ եպիսկոպոս, թէ քահանայ, թէ՛ իշխան եւ թէ ռամիկ աշխարհական...:

«Այլ եւ վասն Ֆռանկաց միաբանութեան, զի թէ ստոյգ է որ դու չես միաբաներ, նա Փափուն զեր մի գրէ ի քեզանէ եւ յայլ ամենայն վարդապետաց, որ քո մօհրն եւ վարդապետացն եւս ի վերայ լինի. եւ այն չՁաքարիային եւս չարաչար բանադրանք մի գրէ եւ կնքէք ամենայն վարդապետքդ. եւ զեր ի